

**Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԵՏ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ**

20-րդ դարասկզբին, երբ հայ ժողովուրդը անցնում էր դանթեական դժոխքի միջով, Թումանյանը շարունակում էր թղթին հանձնել հուշեր, օրագրային գրառումներ, հոդվածներ, բանաստեղծություններ, որոնցում քննում է հայ ժողովրդի անցած ճանապարհը, հայ մարդու ճակատագիրը, մեծ ազգերի կեղծ ու շահախնդիր գործունեությունը և մարդ արարածի էությունն առհասարակ: Այդ տարիներին նրա ծավալած գործունեության, ստեղծագործական ընդվզումների մասին բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ, հոդվածներ կան, սակայն առանձին ուշադրության չի արժանացել «Հայրենիքիս հետ» ժողովածուն՝ տպագրված 1916 թվականին: Գրքի նկատմամբ մեր հետաքրքրությունը պայմանավորված է այն հարցով, թե ի՞նչ նպատակ էր հետապնդել արդեն տպագրված ստեղծագործությունների համահավաք ժողովածուն և ինչպիսի՛ արձագանքներ է ունեցել: Հատկանշական է, որ ժողովածուն այնուամենայնիվ դարձել է ժամանակի որոշ գրաքննադատների քննության առարկան. տպագրվել են գրախոսականներ ու հոդվածներ, որոնց գոյությունն արդեն խոսում է, տեսակետները՝ հետաքրքիր, երբեմն՝ հակասական: «Հայրենիքիս հետ» ժողովածուի մանրակրկիտ քննության հարցը դուրս է մեր ուսումնասիրության տիրույթից: Մեր խնդիրն է հնարավորության սահմաններում պարզաբանել՝ ի՞նչ նպատակ է հետապնդել ժողովածուի տպագրությունը, պատմական հեռանկարի մեջ դիտարկել՝ ե՛րբ և ո՛ւմ կողմից է առաջադրվել բանաստեղծի հիշյալ ժողովածուն բնութագրող այս կամ այն հայեցակետը, որոնք ոչ միայն պարզաբանել են Թումանյանի ստեղծագործությունների տեղն ու դերը արևելահայ գրականության մեջ, այլև այդ համապատկերում նախանշել ժամանակի գրաքննադատական մտածողության միտումներն ու հայացքները:

1915թ. աշնանը Ազգային բյուրոյի կոչով աշխարհի տարբեր ծայրերից Կովկաս են գալիս հայկական կամավորական նոր խմբեր՝ բերելով անհրաժեշտ ռազմամթերք, որոնք, սակայն, բռնագրավվում են

ցարական պաշտոնյաների կողմից: Արդյունքում հայ զինվորները հուսալքվում և կազմալուծվում են: 1915թ. դեկտեմբերի 27-ին, ապա 1916թ. հունվարի 7-ին, ելույթ ունենալով Ազգային բյուրոյի նիստում, Թումանյանը բարձրացնում է այն կարևոր խնդիրը, որ պետք է անել ամեն ինչ՝ կամավորական այդ խմբերը պահելու համար. վերջիններս ոչ միայն կոչվում են դարավոր թշնամու՝ թուրքերի դեմ, այլև համախմբում են հայ ժողովրդի զավակներին: «Ամերիկայից մինչև Ասիա, – ասում է Թումանյանը, – հայ ժողովուրդը իր զավակներով և փողով մասնակցում է այդ խմբերին: Էսպիսի ուրիշ դրուժինա չկա և դրա համար իր հատուկ կազմակերպությունը պիտի ունենա»:<sup>1</sup>

Յավոք, հայրենիքի համար պայքարելու պատրաստ կամավորական խմբերը ցարական կառավարության անարդարացի վերաբերմունքի պատճառով հուսալքվում էին ու զորացրվում: Հետադարձ հայացք նետելով պատմական այս փաստերին՝ կարող ենք հավաստել, որ այդ ժամանակահատվածում ևս հայրենիքի ճակատագրով մշտապես մտահոգ բանաստեղծը բարձր պահելու համար հայ կամավորների մարտական ոգին ու ազգային նկարագիրը, 1916 թվականի սկզբին հավաքում և առանձին գրքույկով հրատարակում է «Հայրենիքիս հետ» խոսուն վերնագրով մի ժողովածու, որի մեջ ներառված էին տարբեր տարիներին հայրենասիրական թեմայով գրած բարձրարժեք բանաստեղծությունները՝ «Հայրենիքիս հետ», «Մեր ուխտը», «Հայոց լեռներում», «Հայոց վիշտը», «Մեր նախորդներին», «Գաղթականի երգը», «Տրտմության սաղմոսներից» (2 բանաստեղծություն), «Հոգեհանգիստ», «Վերջին օրը», «Հին կոհվր» պոեմի երկու մասերը՝ «Տանը», «Երկրում», «Ուրբը», «Աղավնու վանքը», «Լուսավորչի կանթեղը» բալլադները: Ստեղծագործությունները միմյանց հաջորդում են՝ առանց ժանրային և ժամանակագրական սկզբունքները հաշվի առնելու: Սակայն ուշագրավ է գրքի առաջին և վերջին բանաստեղծությունների ընտրության տրամաբանությունը: Այդ մասին է. Ջրբաշյանը գրում է. «Նա շարքը բացել է «Հայրենիքիս հետ» համապարփակ և համադրական բանաստեղծությամբ, որ ոչ միայն իր վերնագիրն է տվել ամբողջ գրքին, այլև պայմանավորել է նրա խոհերի և հույզերի ուղղությունը: Գիրքն ավարտվում է «Վերջին օրը» ծավալուն ոտանավորով, որը տոգորված է ազգային տառապանքների մոտալուտ հաղթահարման սպասումով և հավատով»:<sup>2</sup>

<sup>1</sup> Լ. Կարապետյան, Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը, Երևան, 1992, էջ 176:

<sup>2</sup> Է. Ջրբաշյան, Թումանյանի գրական ժառանգությունը, Երևան, 2000, էջ 45:

«Հայրենիքիս հետ» ժողովածուի ծնունդը պատահական չէր. գիրքը կոչված էր մեկ անգամ ևս հիշեցնելու հային, որ իր ազգը, տառապանքների ու հալածանքների երկար ճանապարհ անցնելով, շարունակում է ապրել, արարել, պայքարել՝ մշտապես մնալով իր երկրի, իր հայրենիքի հետ, դառնալով նրա անբաժան մասնիկը, ոգևորելու և ոգեշնչելու մարտնչող զինվորին՝ հավատ ներշնչելով վաղվա օրվա նկատմամբ: Այս տեսանկյունից հետաքրքրական է այն հարցը, թե ինչպե՞ս է ընդունվել ժողովածուն իր ժամանակին. արդյո՞ք գրքի նպատակն ու առաքելությունը ճիշտ են ընկալվել ժամանակի գրաքննադատության կողմից: Տպագրված գրախոսությունների ուսումնասիրությունները բացահայտում են ոչ միայն ժողովածուի ընդհանուր արժևորումը, այլև ժամանակի գրաքննադատական մտքի ընկալման աստիճանը:

Այսպես, 1916թ. մայիսի 29-ին «Մշակի» № 117-ում տպագրվում է Պ. Մակինցյանի «Գրական մանրուքներ» հոդվածը, որում հեղինակը ողջունում է գրքի ծնունդը՝ նկատի ունենալով ծանր ու խառնակ ժամանակները: Ընդհանուր գծերով ներկայացնելով ժողովածուի բովանդակությունը՝ Մակինցյանը մեկ-երկու բնութագրող բառերով թվարկում է իրեն արդեն ծանոթ ստեղծագործությունները, որոնցից որոշ գործեր վաղուց դարձել են հայ ընթերցողի սեփականությունը: Ընդհանուր գծերով ներկայացնելով «Հին կռիվը» պոեմի սյուժետային որոշ հատվածներ՝ գրախոսը ցանկություն է հայտնում պոեմը տեսնել ամբողջությամբ. ««Հին կռիվը» վաղուց հետե մտածած մի մեծ պոեմ է: Ե՞րբ պիտի պոետը տա մեզ այդ պոեմը լրիվ... դա ոչ միայն շատ հետաքրքրական է, այլև կարևոր մեր գրականության համար, որովհետև նրա մեջ *առաջին անգամ* պոեմի նյութ է դառնում մեր մոտիկ անցյալի մի խոշոր հասարակական հոսանքը»:<sup>1</sup>

Պետք է նշենք, որ «Հին կռիվը» ազգային այն մեծ պոեման էր, որի մասին Թումանյանը հիշատակում է 1902թ. Փ. Վարդազարյանին ուղղած նամակներից մեկում: Պոեմի բոլոր 5 մասերը («Տանը», «Ճամփին», «Երկրում», «Հրդեհը», «Ժողովրդի մեջ») 1911թ. այլ ձեռագրերի ու թղթերի հետ առգրավվել են ժանդարմական վարչության կողմից և այդպես էլ ամբողջապես չեն վերադարձվել: Գրախոսը տեղյակ է եղել այդ մասին և հողվածում բարձրաձայնում է՝ կարծես իբրև պոեմի թերություն դիտարկելով անավարտությունը:

Առաջին մասում՝ «Տանը», ներկայացված են Վահանը և իր ընկերները, որոնք ծրագրեր են կազմում Երկրի մասին և մի օր էլ անհետանում են

<sup>1</sup> «Մշակ», № 117, Թիֆլիս, 1916:

հայրենի գյուղից: Մակինցյանը բավական հաջողված ու կենդանի է համարում Վահանի մոր և հոր կերպարները, ինչը, սակայն, չի տեսնում «տղերանց» դեպքում. «Եթե Թումանյանի պես պոետը չի կարողանում մի կարգին երգ դնել դրանց բերնում, կնշանակի՝ ոսկեբերան տղերք չեն եղել նրանք...»:<sup>1</sup>

Երկրորդ մասը ներկայացնում է «Երկիրը», որտեղ հայտնվում են Վահանը և իր ընկերները: Հատվածը մնում է անավարտ: «Այսպիսով մեր սիրելի պոետը,– եզրափակում է քննադատը,– երես չի տալիս ընթերցողին. նոր լույս տեսած գրքույկը ոչինչ նորույթ չի պարունակում մեջը, բայցևայնպես «Հայրենիքիս հետը» կուրախացնի հայ ընթերցողին, որովհետև գրքի սով է, որովհետև Հովի. Թումանյանի պոեզներն են...»:<sup>2</sup> Մենք ձեռնպահ ենք մնում Պ. Մակինցյանի՝ ժողովածուի վերաբերմամբ հնչեցրած դատողություններն ու դիտողությունները գնահատելուց, քանի որ, ինչպես ենթադրում էինք, գրախոսությունը չէր կարող անարձագանք մնալ: Մեկ ամիս անց «Արև» թերթի № 141-ում տպագրվում է Վ. Մենակի «Մի հողվածի առիթով» պատասխան նյութը: Հողվածագրին նախ զարմացնում է այն փաստը, որ Հովի. Թումանյանին մշտապես «խնկարկած» քննադատը հանկարծ «դժգոհ է իր սիրած բանաստեղծից»: Ի՞նչն է պատճառը: Հետևում է հեգնանքի նրբերանգ պարունակող պատասխան. «Ժողովրդի համար այս ծանր օրերին Թումանյանը «թույլ է տվել իրեն՝ երգել իր հայրենիքը»: Բերելով հատվածներ «Հոգեհանգիստ» բանաստեղծությունից և արժևորելով այն՝ իբրև հազարավոր մարդկանց համար հնչեցրած ողբ՝ Վ. Մենակը անդրադառնում է Մակինցյանի այն մտքին, որ «Հոգեհանգիստ» ու «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունները որևէ զգացողություն չեն առաջացնում, և իրավացի հարց է տալիս. «Ինչո՞ւ է այ. Մակինցյանը կարիք զգացել անպատճառ ցուցադրել զգացվելու իր անընդունակությունը»:<sup>3</sup>

Քննադատը շարունակում է ներքին պայքարը Պ. Մակինցյանի գրախոսության դեմ՝ ասելիքը կենտրոնացնելով հատկապես «Հին կռիվը» պոեմի շուրջ: Այս դեպքում նշանակալից է Վ. Մենակի դիտողությունը «տղերանց» մասին Մակինցյանի բացասական ակնարկի վերաբերյալ: «Այդ նշանակում է,– գրում է Մենակը,– որ այ. Մակինցյանը գիտե, որ Հովի. Թումանյանը նախօրոք ծրագրել է վատ բաներ գրել «տղերանց» մասին իր պոեմում և միայն մի դիպված՝ ձեռագրի կորուստը,

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> «Արև», № 141, Թիֆլիս, 1916:

գրկել է պ. Մակինցյանին Հովհ. Թումանյանի բերանից «տղերանց» հասցեին վատ բաներ լսելու հաճույքից»:<sup>1</sup> Ընդհանուր գծերով և որոշ հատվածներով ներկայացնելով պոեմի բովանդակությունը՝ հողվածագիրը գալիս է այն եզրակացության, որ «տղերքը»՝ Վահանը և իր ընկերները, չնայած պոեմի անավարտությանը, ներկայացված են իբրև հայրենասեր ու անձզնագոհ մարդիկ: «Ունենք, թողինք ամենքին».- այսպես են զոհաբերել իրենց գաղափարի համար կյանքի ամենեն թանկ արժեքները և սեփական կյանքը այն «տղերքը», որոնց հակառակորդներն են այսօր պ.պ. Մակինցյանները»<sup>2</sup>, - եզրափակում է Վ. Մենակը:

Որքան էլ հողվածագիրը զարմանքով ու գայրոյթով հագեցած հարցադրումներ է ուղղում Պ. Մակինցյանին, այնուամենայնիվ նշենք, որ վերջինս միակը չէր իր հակասական, վիճահարույց դիրքորոշմամբ: «Հայրենիքիս հետ» ժողովածուն քննության նյութ է դառնում նաև «Հայ նացիոնալիզմի ճգնաժամը» հողվածում՝ տպագրված «Պայքար» թերթի № 36-ում: Հեղինակը՝ Ա. Կարինյանը, մինչ ժողովածուին անցնելը քննում է պատերազմի թոհուրոհում արթնացած տրամադրությունները, հատկապես հայ մտավորականության «նացիոնալիստական-քաղաքական տենչերը»: Քննադատի մտքերը մեծ մասամբ հնչում են իբրև մերկապարանոց հայտարարություններ: «Հայ նացիոնալիստը,- գրում է Կարինյանը,- Կովկասում երբեք նկատի չի ունեցել շահագործվող տարրերի, հայ բանվորության՝ ժողովրդի շահերը և ձգտումները: Վերացական Հայաստանը եղել է ռոմանտիկական այն իդեալը, որ փայփայել է բուրժուական մտավորականը... Առանց քննելու կոնկրետ հասարակական քաղաքական պայմանները, առանց նկատի առնելու ռուսահայ և տաճկահայ ժողովրդի իրական սոցիալական ձգտումները, հիշյալ մտավորականը ձեռնարկել է որոշ քաղաքական էքսպերիմենտներ և ռոմանտիկական ապստամբություններ...»:<sup>3</sup>

Կարինյանը, շարունակելով ամենատարբեր և հակասական որակումներով բնութագրել հայ «նացիոնալիստին», մեղադրում է նրան Տաճկահայաստանը՝ իբրև վաղեմի «իդեալների»՝ «աբստրակտ Հայաստանի մարմնացման մի նպատակահարմար» հնարավորության շահարկելու մեջ: Այս հայեցողությունը քննադատը տեսնում է նացիոնալիստական գործունեության բոլոր ասպարեզներում, մասնավորապես գեղարվեստում, որի արտահայտություններից շատերը, ըստ նրա, զուրկ են

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> «Պայքար», № 36, Թիֆլիս, 1916:

գեղարվեստական արժեքից: Այնուհետև Ա. Կարինյանը խոսքը մասնավորեցնում է Թումանյանի «Հայրենիքիս հետ» ժողովածուի շուրջ. «Այդ երգերի մեջ երևում է մեզ ոչ միայն ռազմական ինստինկտներով տոգորված կոշտ «հայդուկը», այլև տկար հույզերով, հուսահատ տրամադրությամբ համակված մտավորականը...»:<sup>1</sup>

Գրքի առաջին բանաստեղծությունը («Հայրենիքիս հետ») Կարինյանը համարում է լավատեսությամբ հագեցած, որտեղ բանաստեղծը, «վառված *«հըզոր հայրենիքի»* վառ երազով, զվարթ և ուրախ կոչ է անում բոլորին պայքարել հանուն «հայրենիքի» ազատագրության»:<sup>2</sup> Անհասկանալի է, թե քննադատը հատկապես ո՞ր տողերում է տեսնում «զվարթ և ուրախ» կոչը: Հայրենիքի ապագայի նկատմամբ հավատն ու լավատեսությունը բոլորովին էլ չեն ենթադրում այն, ինչ գրում է Կարինյանը: Նրա համոզմամբ՝ Թումանյանը, «նոր հայրենիք» ասելով, հասկանում է «վերացական այն հայեցողությունը, որի մարմնական, ֆիզիկական արտահայտությունը տեսնում է Տաճկահայաստանում», իսկ իրական ժողովրդին չի նկատում: Բարձր գնահատելով իդեալիստական գաղափարներով մարտադաշտ մեկնած կամավորականներին՝ Թումանյանը գրքում շեշտում է նրանց դերը: Կարինյանը, սակայն, քննադատության թիրախն ուղղում է նաև նրանց դեմ՝ անելով անհիմն եզրակացություններ. «Պոետը կամեցել է շեշտել, արձանագրել «տըղերք»-ի դերը, բայց նրա ցամաք, բանականությամբ լեցուն տողերը ավելի ևս որոշ մերկացնում են «տըղերք»-ի գործունեության վերացականությունը, նրանց կատարյալ անուժությունը և անպատրաստությունը... Ընթերցողը տեսնում է միայն մի քանի դեկորատիվ դեմքեր «երկրում» և լսում «տըղերք»-ի անհամոզիչ գոռ ու գոչը... Այդպիսով Հովի. Թումանյանի «պատերազմական» տրամադրությամբ գունավորած երգերը լոկ ցուցնում են նրա բարի ցանկությունները, նրա ոգևորված և սիրալիր վերաբերմունքը դեպի կամավորական գունդերը...»:<sup>3</sup>

Շարունակելով գրախոսությունը՝ Կարինյանն անդրադառնում է ժողովածուի մյուս գործերին՝ Թումանյանի կենսահայեցողությունը որակելով «տխուր և հուսահատ»: Մատնանշելով «Հոգեհանգիստը»՝ քննադատն այստեղ տեսնում է «անկեղծ վիշտ, խոր զգացում, առանց ավելորդ մի շեշտի, առանց աններդաշնակ որևէ հնչյունի»: Թվում է՝ այս ստեղծագործությունը Կարինյանը պիտի արժևորի ըստ պատշաճի,

---

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում:

սակայն հետևող տողերը կրկին զարմանք են առաջացնում: Գրախոսը, առանց թեմատիկ-գաղափարական ենթաշերտերի մեջ ներթափանցելու, առանց խոր և համակողմանի վերլուծության, հայտարարում է, որ Թումանյանը «ցանկանում է և քարոզիչ լինել: Նա կամենում է որևէ խոսք ասել, ոգևորել և խրախուսել»:<sup>1</sup> Ներառելով հատվածներ «Ոգեհանգիստ» բանաստեղծությունից՝ Կարինյանը Թումանյանի խոսքերն անվանում է խրախուսում. «Այդպես է *խրախուսում* Հովհ. Թումանյանը իր *հուսահատ եղբայրներին...* Թող ընթերցողը չմոռանա և այն, որ իր «ոգեպնդիչ» խոսքերը պոետը ավետում է «*թըշվառ էն հոգիներին*»»:<sup>2</sup> Գրախոսության հաջորդ տողերից այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ Ա. Կարինյանը, կա՛մ հատուկ միտումով, կա՛մ բոլորովին չըմբռնելով «Ոգեհանգստի» խորությունը, առավել ևս անտեսելով ժողովածուի գաղափարական ընդհանուր միտվածությունը, հնչեցնում է տեսակետներ և եզրակացություններ, որ, մեղմ ասած, քննություն չեն բռնում: Կարինյանը վերջում իբրև եռանդ ու կորով ներշնչող ստեղծագործություն է համարում «Լուսավորչի կանթեղը»՝ ժողովածուի գրախոսությունն ավարտելով հետևյալ տողերով. «Նրանք, որոնք չեն խրախուսվի «խոժոռ, մենակ ու հաստատ, Մասիսի նման կանգնած» բանաստեղծ-քարոզչի ֆատալիստական տողերից, կարող են ոգեպնդվել՝ կարդալով «Լուսավորչի կանթեղը»... Եվ նացիոնալիստական կուռքերը տապալելուց հետո «թշվառ էն հոգիներին» անշուշտ կմնա կա՛մ ընկնել կրոնական-միստիկական որոնումների աշխարհը, կա՛մ ընտրել հասարակական ստեղծագործության նոր, ավելի հաստատ և առողջ ուղիներ...»:<sup>3</sup>

Ինչպես նկատեցինք, 1916 թվականին ժողովածուին տրված գնահատականները խիստ տարբեր էին ու հակասական: Պատկերը որոշակիորեն փոխվում է ավելի ուշ: 1919թ. «ԱԼԻՔ» գրական ժողովածուի 1-ին գրքույկում տպագրվում է Ե. Տեր-Մարտիրոսյանի մեծածավալ հոդվածը՝ նվիրված Թումանյանի ծննդյան 50-ամյակին, որտեղ, բարձր գնահատելով հայրենասիրական թեմաներով գրված ստեղծագործությունները, հեղինակը միանգամայն համոզված նշում է, որ Թումանյանի հոգուն խորթ է «մարդատյաց հայրենասիրությունը», նա հայ ժողովրդի տառապանքին «շատ լայն բովանդակություն է հաղորդում, համամարդկային այնպիսի բնույթ է տալիս», որ այն համակում և հուզում է ոչ միայն հային, այլև օտարին»:<sup>4</sup>

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> «Ալիք», Պյատիգորսկ, 1919, էջ 43-44:

Ուշագրավ է, որ, ըստ հողվածագրի, «Տանը» պոեմը բացահայտում է «մեր ազատագրական շարժման էությունը»:<sup>1</sup> Զուգադրելով ներկա և նախընթաց տարիները՝ նա աշխարհի հզորների կեղծ խոստումների մեջ փոփոխություններ չի տեսնում: Սա մի կենսական ճշմարտություն է, որ դիմակազերծ է անում «մեծ չարչիներին»: «Եվ այսպես դրսի աշխարհից, երկրի հզորներից հույսը կտրած մարդկության տառապող մի հատվածը ապավինում է իր համեստ ուժերին արևի տակ մարդավայել կյանք ունենալու համար»<sup>2</sup>,– գրում է Տեր-Մարտիրոսյանը՝ համապատասխան հատվածներով ներկայացնելով Վահանի և «տղերքի» ծավալած քայլերի տրամաբանությունը:

Անդրադառնալով «Հոգեհանգստին»՝ հողվածագիրը թախծոտ և հոռի շեշտեր է տեսնում նրանում, սակայն անմիջապես ավելացնում է, որ «մեր վշտի անզուգական երգչի այս հոռետեսությունը տևական չէ, այլ արդյունք վայրկենական ապրումների»<sup>3</sup>: Հաստատուն է Թումանյանի հավատը հայ ժողովրդի լուսավոր ապագայի նկատմամբ: Այս տեսակետից Ե. Տեր-Մարտիրոսյանը ուշագրավ է համարում «Լուսավորչի կանթեղը» լեգենդը, որը «խորհրդանշանն է մեր ժողովրդի անսպառ հույսերի... Տառապանքի բովից անցնող մարդկությունը ի վերջո հոգեպես պիտի վերածնվի ու նրա մի դժբախտ հատվածը՝ հայ ժողովուրդը, նույնպես պիտի ազատագրվի իր անել վիճակից՝ ասելու աշխարհին «էն մեծ խոսքը, խորին խորհուրդը», որ խորհում է «չարադետ» տանջանքներում»:<sup>4</sup>

Նույն թվականին Թիֆլիսի «Աշխատավոր» թերթի մի շարք համարներում (N° N°32, 48, 49, 77, 80) Հովհ. Թումանյանի բանաստեղծության քննական վերլուծության փորձ է անում Վ. Խորենին՝ տպագրելով «Գյուղական աշխարհի երգիչը» վերնագրով մեծածավալ հողվածաշարը: Առաջադիր թեմայի շուրջ գրախոսի կարծիքը զետեղված է N° 77-ում: Հոդվածը աչքի է ընկնում լուրջ և հասուն դիտարկումներով: Թումանյանի բազմալար քնարի երկրորդ գլխավոր լարը համարելով հայրենասիրականը՝ Խորենին քննական է համարում, որ Թումանյանի նման բանաստեղծը չի կարող անտարբեր ու անկարեկից լինել իր ժողովրդի ցավի ու տառապանքի հանդեպ, ուստի պատահական չէ, որ նրա քնարի հիմնական հնչյուններից մեկն էլ հնչում է՝ հայրենասիրական և ժողովրդասիրական տրամադրություններով համակված: «Եվ վերջապես,–

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 44:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 45:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 48:

<sup>4</sup> Նույն տեղում:



գրում է Խորենին,– ապացույց, որ նա անգամ իր բոլոր անհատական ապրումների ու որոնումների ժամանակ իր «հայրենիքի հետ» է եղել, նրա «Հայրենիքիս հետ» հին ու նոր երգերի ժողովածուն, որ լույս տեսավ բանաստեղծի հայրենիքի ազատագրական խոլ ոգորումների ու արյունոտ մաքառումների դատին: Ու դրանց մեջ դուք կգտնեք ոչ միայն սովորական բանաստեղծական քնարական հայրենասիրություն, այլև իսկական ժողովրդական–քաղաքական ապրումներ ու իդեալներ, իսկական հեղափոխական երգեր, որպես «Հին կոիվը» և «Վերջին օրը»:<sup>1</sup>

Հոգվածագիրը հաստատելու համար իր խոսքերի ճշմարտացիությունը «թեթևակի վերլուծության» է ենթարկում Թումանյանի հայրենասիրական երգերը, մատնացույց անում դրանցում դրսևորված հայրենասիրության նրբերանգները, նկատում, որ բանաստեղծի հոգու անհատակ վիշտն ու հայրենիքի խորունկ ցավերը «ի մի են խառնվում մի հոգեպարար, մի հաշտարար վսեմ համազգացումի մեջ... որի համակիր ներապրումի մեջ ի մի են ձուլվում անհատական ծանրաթախիժ ես-ն իր ապրումներով և հարվածված կամ «զարկված ու զրկված» հայրենիքը իր «հազարավոր ցավերով»:<sup>2</sup>

Վ. Խորենին շեշտադրում է այն, որ Թումանյանի հայրենասիրությունը մի բնական զգացմունք է դեպի հայրենի, հարազատ բնությունն ու ժողովուրդը: «Եթե կուզեք դա հայրենասիրություն չէ,– գրում է քննադատը,– այլ հայրենական **բնասիրություն** կամ բնապաշտություն ու ժողովրդասիրություն է: Այդպիսի հայրենասիրությունից հեռու է նախ ամեն տեսակ նեղ ազգայնականությունը և ապա՝ դա անբաժան է իրական ժողովրդասիրությունից ու իսկական մարդասիրությունից: Մի մաքուր, մի վեհ հումանիստական գեղապաշտ, բնապաշտ ու մարդապաշտ շունչ ունի այդ հայրենասիրությունը, և **այդ է հայ աշխատավոր ու այդ իսկ խաղաղասեր ժողովրդի իսկական հայրենասիրությունը**»:<sup>3</sup>

Այսպիսով՝ Վ. Թումանյանի «Հայրենիքիս հետ» ժողովածուն իր ժամանակի ծնունդն էր՝ կոչված հուսադրելու, պայքարի կոչելու ժամանակի հայրենասեր ուժերին: Եվ չնայած ժամանակի գրաքննադատության՝ ժողովածուի մասին տարբեր, երբեմն հակասական ու միակողմանի գնահատություններին, անհիմն դիտարկումներին, առանց վերլուծության մերկապարանոց հայտարարություններին, այնուամենայնիվ գրախոսականներում մատնանշվեցին Թումանյանի գեղարվեստական

---

<sup>1</sup> «Աշխատավոր», №, Թիֆլիս, 1919:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում:

աշխարհը բնութագրող որոշ նրբերանգներ, որոնք հետագայում խոր և հիմնարար վերլուծության առիթ դարձան:

**Բանալի բառեր.** Հովհ. Թումանյան, «Հայրենիքիս հեղ», 1916 թիվ, հայրենասիրություն, ազատագրական պայքար, լավատեսություն, ոգեշնչում, գրաքննադատություն, գրախոսություններ:

*Мнацакяня Ева*

### **Отклики на собрание Ованеса Туманяна “С родиной”**

#### **Резюме**

В статье представляется цель создания собрания Ованеса Туманяна “С родиной”, выявляются национальный, патриотический дух, тенденция воодушевления и вдохновения сражающихся солдат, а также оценки, данные собранию современной критикой. В статье подчеркиваются аспекты и выявления, которые не только поясняют место и роль включенных в собрание произведений в восточноармянской литературе, но и предначертание в данной панораме тенденций и аспектов критического мышления времени.

*Mnatsakanyan Eva*

### **Reviews on H. Toumanyan’s Digest “With My Homeland”**

#### **Summary**

The article focuses on the aim of creating H. Toumanyan’s digest “With My Homeland”, reveals the national –patriotic atmosphere of the time and the intention to inspire and encourage the struggling soldiers, as well as the appraisals given to the digest by the literary critics of the time. The article highlights scrutinized findings and points, which reveal not only the place and role of the pieces in the Eastern Armenian literature, included in the digest, but also outline the tendencies and views in the literary criticism of the time.